

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԵՎ
ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ
ՀԻՄՆԱԽՆՆԴԻՐՆԵՐ

Միջբուհական կոնսորցիումի գիտական հանդես

•

ПРОБЛЕМЫ ПЕДАГОГИКИ
И ПСИХОЛОГИИ

Научное периодическое издание межвузовского консорциума

•

MAIN ISSUES OF PEDAGOGY
AND PSYCHOLOGY

Scientific Periodical of INTERCOLLEGIATE CONSORTIUM

3

Խմբագրական խորհրդի նախագահ՝

**Տիգրան Սարգսյան
Գլխավոր խմբագիր՝**

Նաիրա Հակոբյան

Եվրասիական փնտրական հանձնաժողովի նախագահ

Խաչատրուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի պրոֆեսոր, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Պարասիանաբու թարգմանչար՝

Կանո Վարդանյան

Խաչատրուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գիտահետազոտական կենտրոնի ղեկավար, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Խմբագրական կոլեգիա՝

Ռուբեն Սիրգախանյան

Խաչատրուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ռեկտոր, պարմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Գուրգեն Խաչատրյան

Վանաձորի Հովհաննես Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի ռեկտոր, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ռուզաննա Հակոբյան

Գալստի պետական համալսարանի ռեկտոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Նորայր Ղուկասյան

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության Կրթության ազգային ինստիտուտի փնտրեն

Արտուշ Ղուկասյան

Գորիսի պետական համալսարանի ռեկտոր, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Վահրամ Առաքելյան

Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի ռեկտոր, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Սահակ Մինասյան

Շիրակի պետական համալսարանի ռեկտոր

Արտեմ Սարգսյան

Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի թղթակից անդամ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Աելիտա Դոլուխանյան

Խաչատրուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հայ գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի թղթակից անդամ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Արթուրի Գևորգյան

Խաչատրուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի պրոռեկտոր, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Հերբերտ Քերիլս

Բելգիայի Գենտի համալսարանի պրոֆեսոր, միջազգային սոցիոլոգիական սոցիալիստիկ անդամ

Հայկ Պետրոսյան

Մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Այա Բերբերյան

Ռուս-հայկական (Սլավոնական) համալսարանի հոգեբանության ամբիոնի վարիչ, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ժակլին Մեծեն

Ֆրանսիայի Լիոնի Ժան-Մուլեն 3 համալսարանի պրոֆեսոր, միջազգային հոգեբանական սոցիալիստիկ անդամ

Լյուդմիլա Բալասանիկովա	<i>Ռուսաստանի Գերցենի անվան պետական մանկավարժական համալսարանի մանկավարժական գիտությունների ՅՈՒՆԵՍԿՕ-ի ամբիոնի համադեղեկավար, բանասիրական գիտությունների թեկնածու</i>
Սերգեյ Աթանասյան	<i>Մոսկվայի քաղաքային մանկավարժական համալսարանի ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր</i>
Իրակլի Իմեդաձե	<i>Վրաստանի գիտությունների ազգային ակադեմիայի թղթակից անդամ, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Դ. Ն. Ուզնաձեի հոգեբանության ինստիտուտի տնօրեն</i>
Դմիտրի Շնչենկո	<i>Ռուսաստանի Դաշնության պետական հումանիտար համալսարանի մարքեթինգի և գովազդային գործունեության վարչության պետ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր</i>
Օլգա Տրիֆոնովա	<i>Մոսկվայի քաղաքային մանկավարժական համալսարանի սասկիտայն-տրայի և դոկտորանտուրայի բաժնի վարիչ, քիմիական գիտությունների թեկնածու, դոցենտ</i>
Յան Դոլակ	<i>Բշնոյի Մասարիկ համալսարանի թանգարանագիտության և ժառանգության ՅՈՒՆԵՍԿՕ-ի ամբիոնի վարիչ, պարսկական գիտությունների դոկտոր (Չեխիա)</i>
Լիլիա Բալասանյան	<i>Խաչատրուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի օրսար լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ</i>
Իննա Մարգսյան	<i>Խաչատրուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ռուսաց լեզվի ամբիոնի վարիչ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր</i>
Տիգրան Միքայելյան	<i>Խաչատրուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի օրսար լեզուների ֆակուլտետի դեկան, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ</i>
Անի Մանուկյան	<i>Խաչատրուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի արտասահմանյան լեզուների և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ</i>

Միջբուհական կոնսորցիումի «Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներ» գիտական հանդեսը միտված է նպաստելու Հայաստանի Հանրապետությունում բարձրագույն մանկավարժական կրթական համակարգի բարելավմանը և առաջընթացին: Պարբերականում գերեզմում են գիտաբանական և գիտամեթոդական բնույթի հոդվածներ, որոնք կօժանդակեն մանկավարժության և հոգեբանության բնագավառների առջև ծառայած խնդիրների լուծմանը, կրթության կառավարման հիմնախնդիրների լուսաբանմանը, համաշխարհային փորձի ուսումնասիրմանը և միջազգային կրթական գործընթացների առաջադրած դրոյթների համակարգված և միասնական ներդրմանը:

Գիտական հանդեսը նախատեսված է մանկավարժների, հոգեբանների, բարձրագույն կրթության համակարգում աշխատողների և առհասարակ մանկավարժ-հոգեբանական գիտությունների զարգացմամբ շահագրգիռ յուրաքանչյուրի համար:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՈՒՄՆԵՐ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԵՆԵԶՄԵՆԹ

ԺԵՆԱ ՌՈԴԵՍ

Ինչպես նվազագույնի հասցնել դասարանի խառնաշփոթը
համագործակցային մեթոդի կիրառմամբ 15

ԻՐԻՆԱ ԲՈՒՌԱԿՈՎԱ

Տեխնոգիական մոդեցնան կիրառումը ուսանողների մասնագիտական
պարտասարության որակի կառավարման մեջ 23

ՄԱՐԱԼ ՕՍԱՐՈՎԱ

Գիտական աստիճանաշնորհման համակարգի արդիանականացման իրավական հարցեր 31

ՄԱՐԱԼ ՕՍԱՐՈՎԱ

Միջնշակության հաղորդակցության ազդեցությունը ուսանողների
էթնոլեզվաբանական վարքի վրա 45

ՍՎԵՏԼԱՆԱ ԿՈՒԱԶԵՎՍԿԱՅԱ

Մինչհամալսարանական համագործակցության կազմակերպումը՝ որպես համալսարանի
միջազգային գործունեության ռազմավարական ուղղություններից մեկը 50

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՎ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ

ԱՐՇԱԿ ՄԵԼՔՈՆՅԱՆ

Հայրենասիրական դաստիարակության խնդիրները հայկական մշակույթի
դասավանդման համարեքսպորտ (ավագ դպրոցում) 61

ՍՈՒՍԱՆՆԱ ԱՆԳՈՒՐՅԱՆ

Հեռավար ուսուցման փեխնոլոգիաների կիրառումը օտար լեզվի
հեռակա կրթության դասընթացում 71

ՍԱՄՍՈՆ ՄԻԻԹԱՐՅԱՆ

«Սոցիոլոգիա» մասնագիտությամբ ուսանողական ինքնուրույն գիտական
աշխատանք գրելու հմտություններ 78

ԱՐՄԵՆՈՒՀԻ ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ

Միջառարկայական կապեր. գրականություն և պարմություն 85

ԶԱՐԳԱՅՄԱՆ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԶԱՄԻԼՅԱ ՆԱՄԱԶԲԱՅԵՎԱ

Ժամանակակից հոգեբանական գիտության առաջնահերթությունները Ղազախստանում 90

ՍԱՄՎԵԼ ԻՈՒԴՈՅԱՆ, ՍԱԹԵՆԻԿ ԳԱՆԻԵԼՅԱՆ

Ճգնաժամի դրսևորման առանձնահատկությունները դեռահասի
կենսագործունեության փարբեր ոլորտներում 97

ՌՈՒԲԵՆ ԱՂՈՒԶՈՒՄՅԱՆ, ԼԱՌԻՐԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ, ԱՆԻ ԽԱԶԱՏՐՅԱՆ

Կառավարչական գործունեության հոգեբանական անվրանգության հիմնասխեմայի 101

ՎԵՐԱ ՖԻԼԻՊՈՎԱ, ԱՆԳՐԵՅ ՏԱՐԱՍՈՎ

Հոգեբանության առարկան՝ իբրև մանկավարժահոգեբանական գործունեության հիմք 106

ԳԱՎԻԹ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Անձի վերահսկման լոկուսի և դրամային վարքագծի ինքնակառավարման
շարժրնթացի պայմանավորվածություն 119

ՆԱԻՐԱ ՀԱՎՈՐՅԱՆ, ՍԵՒԱ ՎԱՐԳԱՆՅԱՆ

*Մասնագիտության փոփոխության պայմաններում անձի հարմարվողականությունը
և մասնագիտական վերակողմնորոշման միտումները 124*

ԼԵԶՎԻ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ԱՆԼԻՏԱ ԴՈԼՈՒԻԱՆՅԱՆ

*Կարևորագույն հետազոտություն՝ նվիրված արևմտահայ մամուլի
պատմության ավարտին (1900-1922) 134*

ԳԻՏԱԿԱՆ ՄՏՈՐՈՒՄՆԵՐ

ՏԻԳՐԱՆ ՔՈՉԱՐՅԱՆ, ՀԱՅԿ ՂՈՒԼՅԱՆ

*Ֆրանսիայի ներգրավումը և մասնակցությունը դարաքաղյան հակամարտության
կարգավորման շուրջ բանակցություններին 142*

ԱՐԹՈՒՐ ԱԹԱՆԵՍՅԱՆ

*Հայաստանյան հասարակության մեջ Եվրոպայի ընկալման վրա ազդող
որոշ քաղաքաբնակչական գործոններ 151*

ՅՈՒՐՉԵՆԿՕ ՆԱՏԱԼԻԱ

*Էքսորենիզմը ժամանակակից հասարակության հանրային քաղաքականության մեջ
(տեղեկատվական-հաղորդակցական տիրույթ) 159*

ՔՐԻՍՏԻՆԵ ԲԵԳԼԱՐՅԱՆ

Յեղասպանության գաղափարի վերախմբավորում 165

ՈՍԿԵ ԷԶԵՐ

ԷՐԻԿ ԲԵՌՆ

Տրանսակցիոն վերլուծություն 171

ԳԻՏԱԿԱՆ ՕՐԱՑՈՒՅՑ 179

«ՍՈՑԻՈԼՈԳԻԱ» ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ ԳՐԵԼՈՒ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համալսարանական ուսանողի ինքնուրույն հետազոտություններն ուսանողների մասնագիտական գործունեության փորձարկման կարևորագույն փուլերից են և ուղղված են ապագա մասնագետների մոտ մասնագիտական հետազոտությունների կարողությունների և ձիրքի ձևավորմանն ու ամրապնդմանը: Մասնավորապես, կուրսային աշխատանքն ուսանողի առաջին քայլն է դեպի ինքնուրույն գիտական հետազոտությունը, իսկ մագիստրոսական աշխատանքի կարգավիճակն ընդհանրապես առանձնահատուկ է, քանի որ հենց մագիստրոսական աշխատանքում է իրեն բացահայտորեն դրսևորում մագիստրոսի ընդհանուր գիտական կուլտուրան, աշխատասիրությունը, բանիմացությունը, ժամանակակից գիտության նվաճումներին քաջատեղյակությունը, ինքնուրույն հետազոտության արդյունքները: Մագիստրոսական աշխատանքը հնարավորություն է ընձեռում դատելու հեղինակի պոտենցիալ հնարավորությունների մասին, կռահելու, թե ի՞նչ սպասելիքներ կարելի է ունենալ ամենամոտ ապագայում նրա հետազոտական աշխատանքի առումով:

Հանգուցային բառեր և արտահայտություններ. սոցիոլոգիա, մասնագիտություն, ուսանողական ինքնուրույն գիտական աշխատանք:

Չնայած, որ ուսանողական գիտական աշխատանքների պատրաստումն ու դրանց սահմաններում մասնագիտական ուսումնասիրությունների իրականացումն ուսումնական գործընթացի կարևորագույն տարրերից է, այս խնդրին

նվիրված համալիր հետազոտությունները սակավաթիվ են [1], իսկ սոցիոլոգիայի բնագավառում ուսանողական ինքնուրույն գիտական աշխատանքների պատրաստման մեթոդաբանության վերաբերյալ՝ գրեթե բացակայում են:

Առհասարակ գոյություն ունեն ուսանողական ինքնուրույն գիտական աշխատանքների տիպաբանման մի շարք մոտեցումներ: Բացի կուրսային, ավարտական և մագիստրոսական աշխատանքներից, որոնք բուհերի մեծ մասում պարտադիր բնույթ են կրում և ամփոփում են ուսումնական հերթական շրջափուլը (ուսումնական տարին, կամ ուսումնական ամբողջ ծրագիրը)՝ առանձնացնում են նաև ռեֆերատը, զեկույցը և էսսեն, որոնք մի շարք բուհերում ունեն պարտադիր բնույթ, սակայն հիմնականում կիրառվում են առանձին դասընթացների ժամանակ՝ դասախոսի ընտրությամբ [2]:

Կուրսային, ավարտական և մագիստրոսական աշխատանքների նախապատրաստման և ավարտի գործընթացը կազմված է երկու հիմնական փուլերից, որոնք են թեմայի հետազոտությունը և արդյունքների ներկայացումը:

Իր հերթին, ինչպես մենք վերը մանրամասնորեն քննարկեցինք, հանձնարարված թեմայի հետազոտությունն իրականացվում է նույնպես երկու հիմնական փուլերով՝ թեմայի վերլուծությամբ և բացահայտված ենթախնդիրների լուծման վարկածների (հիպոթեզների) առաջադրմամբ և ստուգմամբ:

Քայլերի հերթականության առումով արդյունավետ ուսանողական գիտական

հետազոտությունը պետք է բաղկացած լինի հետևյալ փուլերից՝

- պլանի մշակում.
- նյութերի հավաքում.
- մեթոդի ընտրություն.
- գործիքների (հարցաթերթ, հարցաշար, դիտարկման կամ բովանդակային վերլուծության բլանկ, և այլն) կազմում և փորձարկում.
- բուն հետազոտություն (հետազոտողի դաշտային աշխատանքները).
- ստացված տվյալների մշակում.
- տվյալների վերլուծություն.
- տվյալների ձևակերպում գրավոր աշխատանքի տեսքով՝ ըստ տվյալ բուհի և ֆակուլտետի կողմից առաջադրվող պահանջների.
- աշխատանքի համապատասխան ներկայացում և պաշտպանություն (գնահատականի ստացում):

Կուրսային, ավարտական և մագիստրոսական աշխատանքներին ներկայացվող պահանջների սանդղակը

Քանի որ ուսանողական ինքնուրույն աշխատանքում ուսանողն իր առաջին քայլերն է կատարում դեպի գիտական հետազոտություն, ապա դրանց բովանդակությունը հիմնականում կազմում է համապատասխան գիտական հրատարակումներում առկա նյութերի հավաքումը, դրանց դասակարգումը, թեմայի վերաբերյալ տեսակետների բացահայտումը, համապատասխան փաստարկների քննադատական վերլուծությունը և ձգբոտումը:

Այս փուլում կարևորվում է գիտական ղեկավարի կողմից ուսանողի տեսական աշխատանքների ուղղորդումը: Ուսանողից պետք է պահանջել ոչ թե տվյալ ծավալի տեքստ ներկայացնել թեմայի մասին, այլ նրան հանձնարարել ներկայացնել թեմայի վերաբերյալ հիմնական տեսակետները, շարադրել յուրաքանչյուր տեսակետի փաստարկները,

մատնանշել գրականությունում հայտնի առարկությունները քննարկվող հայեցակետերի դեմ:

Ուսանողական գրավոր աշխատանքի ***կառուցվածքում*** պետք է առկա լինի ներածությունը, թեմայի հիմնական մասերը լուսաբանող գլուխները և եզրակացությունը: Աշխատանքի բովանդակությունն արտացոլում է դրա աղբյուրներում պարունակված նյութերը, իսկ հետազոտական կողմը ներառում է այդ աղբյուրներում շարադրված թեմայի վերաբերյալ հիմնական տեսակետների բացահայտումը, դրանց փաստարկների և դրական կողմերի շարադրանքը, աղբյուրներում դրանց հանդեպ քննադատական դիտողությունների ներկայացումը:

Կուրսային, ավարտական աշխատանքի հետազոտական կողմը պետք է ապահովի թեմային վերաբերող հիմնական տեսակետների ու դրանց փաստարկների բավարար ծավալով շարադրանքը: Ինչ վերաբերում է մագիստրոսական աշխատանքին (մագիստրոսական ատենախոսությանը), ապա դրան ներկայացվող պահանջներն ավելի խիստ են: Ինչպես նշում են հեղինակները, մագիստրոսական ատենախոսությունը տարբերվում է բակալավրի ավարտական աշխատանքից հիմնախնդրի մանրամասն մշակվածությամբ, հետազոտության գիտական ուղղվածությամբ: Սովորաբար մագիստրոսական ատենախոսությունը գնահատվում է հետևյալ չափանիշներով՝

- հիմնախնդրի տեսական և գիտահետազոտական մշակվածությունը.
- հետազոտության մեթոդիկայի համապատասխանությունը դրված խնդրին.
- հիմնախնդրի լուծմանն ուղղված մոտեցումների ամբողջականությունը, համակարգայնությունն ու բազմաբևեռությունը.
- կոնկրետ գիտական և (կամ) կիրառական հիմնախնդրի լուծման ար-

դյունավետությունն ու արժեքը տվյալ գիտակարգի համար:

Մագիստրոսական թեզի հետազոտական կողմը պետք է կենտրոնանա մրցակից տեսակետների թերությունների բացահայտման վրա, ինչպես նաև այդ թերություններն ուղղելու և ձգճարտելու փորձերի վրա՝ ընդհուպ մինչև սեփական ամբողջական տեսակետի մշակումը: Մագիստրոսական թեզի գերխնդիրը կարելի է համարել գիտական հողվածի ներկայացումը՝ թեզում ստացված արդյունքների հիման վրա:

Ինչպես տեսնում ենք, ուսանողական ինքնուրույն աշխատանքներին ներկայացվող պահանջներն աճում են ինչպես դրանց հիմքը կազմող աղբյուրների քանակի առումով, այնպես էլ ուսանողի կատարած աշխատանքի ինքնուրույնության աստիճանի տեսակետից: Վերջինիս հիմնական բովանդակությունը կազմում են աշխատանքի թեմայի շուրջ ձևակերպված տարբեր հայեցակետերի քննադատական վերլուծությունը ուսանողի կողմից: Դա նշանակում է, որ ուսանողական ինքնուրույն աշխատանքի թեման ընտրելիս, առաջին հերթին, պետք է հաշվի առնել հիմնահարցերի պրոբլեմային բնույթը և հարցադրման կարևորությունը:

Նյութերի հավաքման փեխնույր-գիտ

Քանի որ մասնագիտական գիտելիքների վերաբերյալ առաջին կուրսի ուսանողն ունի միայն ամենաընդհանուր պատկերացումներ, իսկ իրենից պահանջվելու է հիմնականում թեմայի նյութի համակարգված շարադրանք, ապա նպատակահարմար է համապատասխան ամբիոնի միացյալ ուժերով կազմել գրավոր աշխատանքների թեմաների այնպիսի ցանկ, որը կարող է «ձգել» նորեկներին արդիականությամբ, կարևորությամբ և պրոբլեմայնությամբ:

Կուրսային աշխատանքների, և հատ-

կապես ավարտական ու մագիստրոսական աշխատանքների թեմաները պետք է ի սկզբանե լինեն պրոբլեմային, պարունակեն մրցակցող հայեցակետեր: Մյուս կողմից՝ ավարտական ու, հատկապես, մագիստրոսական թեզի ընտրության դեպքում ցանկալի է, որ թեման լինի հեռանկարային՝ հետագայում այն ատենախոսության թեմա դարձնելու իմաստով, կամ առնվազն, համապատասխան գիտական հողված գրելու առումով:

Ընտրված թեմայով աշխատանքն սկսվում է հետազոտության **նախնական պլանը** կազմելով: Ինքնուրույն աշխատանքն իրագործելու երրորդ քայլը **գրականության նախնական ցանկի** կազմումն է: Միանգամայն հասկանալի է, որ գրականության նախնական ցանկն անընդմեջ հարստանում է ուսանողական աշխատանքը կատարելու ամբողջ գործընթացում: Այդ ցանկի մեջ են ներգրավում ոչ միայն այն գրականությունը, որը մանրամասնորեն մշակվել է ուսանողի կողմից և նկատելի չափով նպաստել նրա աշխատանքին, այլ նաև այն աղբյուրները, որոնցում միայն մեկ-երկու օգտակար միտք է հաջողվել հայտնաբերել:

Ձեռքի տակ ունենալով գրականության ցանկը՝ ուսանողը ուշ թե շուտ՝ կախված նրա ջանասիրությունից և կազմակերպվածությունից, սկսում է աղբյուրների մշակումը և նյութերի հավաքումը, որոնց տակ հասկացվում է աղբյուրների տեքստերից օգտակար մեջբերումների հավաքումը, աղբյուրների՝ այսպես կոչված «կոնսպեկտների» կազմումը հետագա շարադրանքում օգտագործելու նպատակով: Այդ առումով աշխատանքը կշահի, եթե մշակվող աղբյուրի «մեջբերումների կոնսպեկտից» առաջ ուսանողը կազմի այդ աղբյուրում քննարկվող այն **հարցադրումների ցուցակը**, որոնք անմիջապես վերաբերում են իր ինքնուրույն աշխատանքի թեմային: Կազմելով տվյալ աղբյուրի հարցադրումների ցուցակը՝ ուսանողն ամ-

բողջական պատկերացում կատանա այդ աղբյուրում ներկայացված իրեն համար օգտակար տեղեկությունների վերաբերյալ և այդ հիմքով շատ ավելի ճշգրիտ ու լրիվ կկատարի իր աշխատանքի համար պիտանի տեղեկությունների ընտրությունը:

Մի կարևոր ճշգրտում ևս: Նախնական (հիմնական) աղբյուրների հարցացանկի կազմումն այն սկզբունքային կարևորությունն ունի, որ, ի մի բերելով և համախմբելով ու դասակարգելով այն հարցադրումները, որոնք քննարկվում են գրականությունում, ուսանողը, փաստորեն, ճշգրտում է իր աշխատանքի նախնական պլանը կամ, ավելի ճիշտ, ստանում է իր կատարելիք աշխատանքի մանրամասնացված **հիմնական պլանը**:

Ուսանողական աշխատանքի հավաքած նյութերի հարստությունը (մեծ ծավալը) առաջ է բերում դրանց դասակարգման լուրջ և կարևոր խնդիրը: Ո՞րն է բազմապիսի ու բազմաբնույթ մեծածավալ նյութերի **դասակարգման արդյունավետ եղանակը**: Նյութերի դասակարգման հիմքը ճշգրտված պլանի կետերն են, որոնք կազմվել են հիմնական աղբյուրների մշակման արդյունքում:

Հեղազոտրական փուլ. ուսանողի ինքնուրույն հեղազոտության քայլերը

Գոյություն ունեն հետազոտության երկու ոլորտներ՝ տեսական, և փորձարարական բնույթի հետազոտություն: Առաջին ոլորտում ձևակերպված խնդիրը լուծվում է ընդհանուր գիտելիքների, օրենքների, սկզբունքների ու բանաձևերի հենքով: Երկրորդի հիմքը՝ հետազոտության արդյունքով բացահայտվող փաստերն են: Տեսական հետազոտության նպատակը հարցի ընդհանուր լուծումը առաջադրող դրույթի (հիպոթեզի) ձևակերպումը և հիմնավորումն է: Փորձարարական հետազոտության առար-

կան կոնկրետ պորբլեմային իրավիճակ է, և որոնման արդյունքը վերաբերում է հենց այդ կոնկրետ դեպքին: Տեսական հետազոտությունը կատարվում է այս աշխատության առաջին մասում ներկայացված ընդհանուր մեթոդով, որի բովանդակությունը կազմում է լուծման գաղափարի (հիպոթեզի) առաջադրումը՝ ուսումնասիրվող խնդրի վերլուծության և լուծման գաղափարի համադրության միջոցով: Փորձարարական հետազոտությունում կենտրոնական տեղ են գրավում աշխատանքի կատարման կոնկրետ եղանակները՝ մեթոդիկաները:

Թեմայի վերաբերյալ մրցակցող կարծիքների ու հայեցակետերի հիմնական մասը սովորաբար այս կամ այն չափով մատնանշված է ուսանողի կողմից մշակվող աղբյուրներում, քանի որ նախորդ հետազոտությունների վերլուծական ուրվագիծը ներկայացնելն այսօր ընդհանուր պահանջ է գիտական հրատարակումների ոլորտում: Այդուհանդերձ, տվյալ թեման ուսումնասիրող ուսանողն ունի այն առավելությունը, որ նախորդ հետազոտողների մոտ միշտ չէ, որ տվյալ թեման ուշադրության կենտրոնում է եղել, հետազոտողի գլխավոր նպատակը կարող է այլ թեմա հանդիսանա, իսկ տվյալ թեմային նա կարող է անդրադարձած լինի իր հատուկ նկատառումով կամ տեսանկյունով:

Հայեցակետերի առանձնացումն ինքնանպատակ չէ. հիմնական խնդիրը դրանց գնահատականն է՝ աչալուրջ և օբյեկտիվ քննադատական վերլուծության հենքով: Այստեղ ուսանողը նախ պետք է կարողանա յուրաքանչյուր քննարակվող հայեցակետում առանձնացնել դրա հիմնադրույթները և կարևոր եզրակացությունները, դրանց մեջ առանձնացնել բավարար հիմնավորվածները, դրանք ներկայացնել որպես քննարկվող հայեցակետի դրական կողմ:

Այստեղ հիմնականում ավարտվում է բուն հետազոտական աշխատանքը, և

ուսանողը կարող է անցնել ստացված արդյունքների եզրափակիչ ամփոփմանը: Նախ՝ անհրաժեշտ է կատարված քննադատական վերլուծության և ուղղումների հիմքով գնահատել առկա մրցակից տեսակետները և մատնանշել դրանցից առավել հաջողը: Այնուհետև ներկայացնել թեմայի հետազոտության այն կարևոր ենթահարցերը, որոնք դեռևս չեն ստացել բավարար լուծում՝ նույնիսկ առավել հաջող հայեցակետում: Կատարված աշխատանքի արժեքն էապես կրարձրանա, եթե հաջողվի առաջադրել ստացված արդյունքի համոզիչ ընդհանրացում: Վերջապես, եզրակացությունը շահեկան է դառնում նաև, երբ այնտեղ մատնանշվում են թեմայի հետագա հետազոտության առավել կարևոր ուղղությունները:

Ուսանողի ինքնուրույն աշխատանքում մեր մեթոդական խորհուրդներն արդյունավետորեն օգտագործելու նպատակով դրանք ներկայացնենք կոնկրետ կետերի ձևով.

- թեմայի վերաբերյալ առկա մրցակից տեսակետների բացահայտում և դասակարգում,
- ներկայացնել հիմնական տեսակետների դրական կողմերը,
- ներկայացնել մրցակից հիմնական տեսակետների փոխադարձ քննադատական դիտողությունները,
- վերլուծել և ձգգրտել այդ դիտողությունները,
- բացահայտել ներկայացված տեսակետների թերի կողմերը՝ հատկապես կապված այդ հեղինակների կողմից օգտագործված սահմանումների, բաժանումների, փաստարկների, ընդհանրացումների, վարկածների և եզրակացությունների հետ,
- փորձել ինքնուրույն ուղղել բացահայտված թերությունները,
- այդ քննադատական վերլուծության և ուղղումների հիմքով գնահատել առկա մրցակից տեսակետները և մատնանշել առավել հաջող հայեցակետը,

- մատնանշել թեմայի հետազոտության այն կարևոր ենթահարցերը, որոնք դեռևս չեն ստացել բավարար լուծում՝ նույնիսկ առավել հաջող հայեցակետում,

- փորձել ստանալ այդ ենթահարցերի սեփական լուծումներ,
- ամփոփել կատարված աշխատանքը՝ ձևակերպելով հետազոտվող խնդրի առավել բավարար լուծումը,
- փորձել առաջադրել ստացված արդյունքի համոզիչ ընդհանրացում,
- մատնանշել թեմայի հետագա հետազոտության առավել կարևոր ուղղությունները (տիպաբանությունը մշակվել է փ.գ.դ., պրոֆեսոր Ռոբերտ Ջիջյանի հետ հիմնախնդրի քննարկման արդյունքում):

Խմբավորելով տվյալ բաժնում քննարկված կետերը՝ ստանում ենք ուսանողի ինքնուրույն աշխատանքի գործընթացի հետևյալ **ընդհանուր կանոցվածքը**.

«Նյութերի հավաքում»՝

- նախնական պլանի կազմում.
- գրականության նախնական ցանկի կազմում.
- հիմնական տեսակետների առանձնացում և դասակարգում.
- հիմնական հացադրումների բացահայտում՝ նախնական գրականության հարցադրումների ցուցակը կազմելու միջոցով.
- նախնական պլանի ձգգրտում և ընդլայնում.
- գրականության մշակում՝ ըստ պլանի կետերի՝ առանձնացված նյութերը տեղադրելով համապատասխան ֆայլերում:

Նյութերի վերլուծություն՝

- պլանի յուրաքանչյուր կետի վերաբերյալ հիմնական տեսակետների առանձնացում և դասակարգում.
- ներկայացնել հիմնական տեսակետների դրական կողմերը.
- ներկայացնել մրցակից տեսակետների փոխադարձ քննադատական

դիտողությունները.

- վերլուծել և ճշգրտել այդ դիտողությունները.

- բացահայտել ներկայացված տեսակետների թերի կողմերը՝ հատկապես կապված այդ հեղինակների կողմից օգտագործված սահմանումների, բաժանումների, փաստարկների, ընդհանրացումների, վարկածների և եզրակացությունների հետ.

- փորձել ինքնուրույն ուղղել բացահայտված թերությունները:

Այդ քննադատական վերլուծության և ուղղումների հիմքով **գնահատել առկա մրցակից տեսակետները** և մատնանշել առավել հաջող հայեցակետը:

Հեղազոտության խնդրի ձևակերպում. մատնանշել թեմայի հետազոտության այն կարևոր հարցերը (ենթախնդիրները), որոնք դեռևս չեն ստացել բավարար լուծում՝ նույնիսկ առավել հաջող հայեցակետում:

Առանձնացված հարցերի (ենթախնդիրների) վերլուծական վերամշակում՝ ստանդարտ տեսքի բերելու նպատակով:

Հարց-ենթախնդիրների ներկայացում սխեմատիկ ձևով:

Փորձել խնդիրները լուծել «ուղիղ եղանակով»՝ անելով անհրաժեշտ եզրակացություններ:

Փորձել խնդիրները լուծել «ենթախնդիրների բաժանման եղանակով»:

Փորձել խնդիրները լուծել «հանդիպակած շարժումով»:

Առաջադրել չլուծված հարցերի (ենթախնդիրների) վարկածներ:

Ուսանողական աշխատանքի շարադրանքի ընդհանուր կառուցվածքը

Ներկայումս ուսանողական ինքնուրույն աշխատանքը շարադրվում է հետևյալ ընդհանուր կառուցվածքով.

- ներածություն,
- տեսական-պատմական ակնարկ,
- թեմայի հիմնային խնդիրների լու-

սաբանման գլուխներ,

- եզրակացություն,

- գրականության ցանկ

- անհրաժեշտության դեպքում՝ հավելվածներ [3]:

Հիշեցնենք, որ ներածությունում պետք է նշել թեմայի արդիականությունը և կարևորությունը: Մեծ ծավալի աշխատությունների ներածությունում նկարագրում են նաև աշխատության ընդհանուր կառուցվածքը, բնութագրում են յուրաքանչյուր գլխի նպատակը և բովանդակությունը՝ ընթերցողին աշխատության վերաբերյալ նախնական պատկեր տալու նպատակով: Գիտական աշխատությունների, հատկապես ատենախոսությունների, ներածությունում համառոտ եղանակով նաև ուրվագծում են թեմայի ուսումնասիրվածության աստիճանը և նշում են թեմայի շուրջ հիմնական հրատարակումները: Ուսանողական ինքնուրույն աշխատանքի ներածությունը կարող է լինել ավելի համեստ ու համառոտ:

Ինքնուրույն աշխատանքի տեսական-պատմական ակնարկի բաժնում արդարացված է շեշտը դնել թեմայի շուրջ տարբեր տեսակետների բացահայտման ու դասակարգման վրա: Մագիստրոսական թեզում ճիշտ կլինի նույն մոտեցումը կիրառել նաև աշխատության յուրաքանչյուր գլխի հանդեպ: Եզրակացության մեջ անպայման պետք է ընդգծել ուսանողի կողմից ստացված նորույթը, այդ թվում նաև այն ճշգրտումները, որ նա առաջարկել է այլ հեղինակների հայեցակետերում: Կարևոր է պատշաճ ուշադրություն հատկացնել նաև աշխատության գրականության ցանկին, հատկապես յուրաքանչյուր աղբյուրի ներկայացման ընդհանուր կառուցվածքի ընդունված եղանակին, այդտեղ օգտագործվող կետադրական և հատուկ նշաններին: Աշխատության ավարտած տարբերակը անհրաժեշտ է վերջնականապես քննարկել գիտական ղեկավարի հետ:

ՊՐԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Գ. Ա. Բրուտյան, Գիտական աշխատանքի տեխնոլոգիան. Փիլիսոփայության միջազգային ակադեմիայի հրատ., Եր., 2010, 114 էջ:
2. Бойко Ж.В., Любичкая Г.С.. Виды самостоятельных работ: реферат, доклад, эссе. Методические указания для студентов специальности 040101 «Социальная работа». – Хабаровск, Центр дистанционного образования, 2011, 28 с.
3. Магистерская диссертация: методические указания / Сост. Н.М. Мухамеджанова. – Оренбург: ИПК ГОУ ОГУ, 2011, 36 с.

НАВЫКИ НАПИСАНИЯ САМОСТОЯТЕЛЬНЫХ СТУДЕНЧЕСКИХ НАУЧНЫХ РАБОТ ПО СПЕЦИАЛЬНОСТИ «СОЦИОЛОГИЯ»

САМСОН МХИТАРЯН

*Ассистент кафедры теории и истории социологии факультета социологии ЕГУ,
кандидат социологических наук*

В статье обосновывается необходимость обучения студентов навыкам написания самостоятельных научных работ. На примере написания дипломных исследований предлагается ряд учебно-методических подходов к работе с материалами, структурированию работы, обоснованию выдвигаемых тезисов и презентации студентами своего научного исследования.

SKILLS OF WRITING STUDENT'S INDIVIDUAL ACADEMIC RESEARCH WORK IN "SOCIOLOGY"

SAMSON MKHITARYAN

*PhD in Sociology, Assistant Professor of the Chair of Theory and History of Sociology,
Faculty of Sociology, Yerevan State University*

The article discusses the need in transferring skills of writing academic papers which are very useful while students prepare their course and diploma works. As a part of academic writing, the author proposes methodological approaches to teaching students how to write diploma works, including collection of materials, structuring of the text and argumentation of the theses, as well as representing the work for defense.

ՍԱՆԿՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՍԱԿԵՆՂԻՐՆԵՐ

Միջրուսական կոնսորցիումի գիտական հանդես

ПРОБЛЕМЫ ПЕДАГОГИКИ И ПСИХОЛОГИИ

Научное периодическое издание межвузовского консорциума

MAIN ISSUES OF PEDAGOGY AND PSYCHOLOGY

Scientific Periodical of INTERCOLLEGIATE CONSORTIUM

3

Համարի թողարկման պատասխանատու և

գլխավոր խմբագիր՝

ՆԱԻՐԱ ՀԱԿՈՒԲՅԱՆ

Համակարգչային ձևավորումը՝

ԱՇՈՏ ԲԱԳՐԱՏՅԱՆԻ

Մրբագրիչ՝

ՕՖԵԼՅԱ ԱՎԱԳՅԱՆ

Հանձնված է տպագրության՝ 20.12.2016 թ.
Տպագրությունը՝ օֆսեթ: Չափսը՝ 70 × 100 1/16
Թուղթը՝ օֆսեթ: Ծավալը՝ 11,5 տպ. մանուկ
Տպաքանակը՝ 150

Տպագրվել է «ԶԱՆԳԱԿ-97» ՍՊԸ-ի տպարանում

ՀՀ, 0051, Երևան, Կոմիտասի 49/2

Հեռ.՝ (+37410) 23 25 28

Էլ. կայքեր՝ www.zangak.am, www.book.am

Էլ. փոստ՝ info@zangak.am

Ֆեյսբուքյան կայքէջ՝ www.facebook.com/zangak